ՀԻՍՈՒՍԸ ԵԿԱՎ ԱՍԵԼՈՒ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ինչի՞ համար եկավ Հիսուսը - Մաս 4

Հովհաննես 4:4 - 42

«Պիղատոսը նրան ասաց. «Ուրեմն դու թագավո՞ր ես»: Հիսուսը պատասխանեց. «Դո՛ւ ես ասում, որ թագավոր եմ: Ես ծնվել ու աշխարհ եմ եկել, որպեսզի ճշմարտության մասին վկայեմ: Ամեն ոք, ով ճշմարտությունից է, իմ ձայնը լսում է:»
Հովհաննես 18:37

4 Ճշմարտություն

1- Ես չեմ կարող թաքցնել իմ անցյալը Աստծուց

Մեր կյանքի մեջ եղած մեղքի դեմ պայքարելու երեք անարդյունավետ միջոցները

1. Անտեսել մեղքը
2. Բարի գործեր անել
3. Հանձնվել մեղքին

Առաջին քայլը դեպի ճշմարտությունը
Եղի՛ր անկեղծ ինքդ քեզ հետ և եղի՛ր անկեղծ Աստծո հետ

2- Հիսուսը գիտի ամեն ինչ իմ մասին և դեռ սիրում է ինձ

Յուրաքանչյուր սուրբ իր անցյալը ունի և յուրաքանչյուր մեղավոր ունի իր ապագան

Երկրորդ քայլը դեպի ճշմարտությունը
Հավատա, որ Նա, որ գիտի քեզ ամենից լավ, սիրում է քեզ ամենից շատ:

3 - Իմ մեղքը ունի իր հետևանքները

«Մարդ ինչ որ սերմանի, այն էլ կհնձի: Իր մարմնի համար սերմանողը մարմնից ապականություն կհնձի, իսկ Հոգու համար սերմանողը Հոգուց հավիտենական կյանք կհնձի:»
Գաղատացիս 6:7-8

Երրորդ քայլը դեպի ճշմարտությունը
Հասկացիր, որ Աստված սիրում է մեզ այնպես, ինչպես որ կանք, բայց Նա սիրում է մեզ այնքան, որ թույլ չտա, որ մենք մնանք նույն վիճակում:

4 - Հիսուսը միակն է, ով կարող է բավարարել իմ ամենախորը կարիքը:

«Եթե իմանայիր Աստծու պարգևը, և թե ո՛վ է նա, որ քեզ ասում է՝ "Ինձ խմելու ջո՛ւր տուր", ապա դո՛ւ նրանից կխնդրեիր, նա էլ քեզ կենդանի ջուր կտար:» Հովհաննես 4:10

«Իսկ այն ջուրը, որ ես նրան տալու եմ, նրա մեջ ջրի աղբյուր կդառնա, որ հավիտենական կյանքի համար կբխի:» Հովհ 4:14

«Ինչպես եղջերուն է փափագում ջրի առուներին, այնպես էլ իմ անձը փափագում է քեզ, ո՛վ Աստված: Իմ անձը ծարավ է Աստծուն՝ կենդանի Աստծուն.» Սաղմոս 42:1-2

«Ահավասիկ Աստված է իմ փրկությունը. ես վստահում եմ և չեմ սարսափի, որովհետև Տեր Աստված է իմ զորությունն ու սաղմոսը: Նա եղավ իմ փրկությունը»: Դուք ուրախությամբ ջուր պիտի հանեք փրկության աղբյուրներից:» Եսայիա 12:2-3

«Ես եմ ծարավածին ձրի տալու կենաց ջրի աղբյուրից:» Հայտ 21:6

Վերջին քայլը դեպի ճշմարտությունը
Խոստովանիր հոգուդ դատարկությունը և թույլ տուր, որ Հիսուսը լցնի այն

«Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա ու խմի:» Հովհաննես 7:37

Հաջորդ Քարոզի Թեման:

Հավասարակշռել ձեր անձնական կյանքը

Հովիվ Սարո Խաչիկեան